Վրացիներին վերաբերեալ բոլոր թուերը վերաբերում են անխտիր վրացական բոլոր ցեղերին, դրանց թուում նաեւ մահմեդ. վրացիներին: Միայն 1838-ի մէջ չեն առնուած մինդրելները եւն., այնպէս որ այդ թուականի համար վրաց թիւը կլոր ձեւով հաշուելու է 400,000:

Թաթարները (թիւրք ցեղ) հաշուուած են միշտ բոլոր մահմ. հետ միասին, բացի 1922-ից:

Հայերի թիւը 1922-ի վիճակագրութեամբ պարզապէս փոքր է ցոյց տրուած իրականից:

Այսչափը միայն ասենք, որ մինչ վերոյիշեալ թուերը ազգային- ցեղագրական տեսակէտից հայերի եւ վրացիների մասին մօտաւորապէս ճիշդ պատկեր են ներկայացնում, թաթարների (թաթարական ցեղ) մասին, ընդհակառակը, չփոթութիւն են առաջ բերում, որովհետեւ նրանց թուերը խառնուած են մընացած մահմեդականների թուին:

Գաղափար տալու համար այդ մասին, ասենք օրինակ, որ նոյն կովկասեան վարչութեան տուեալներով՝ 1886-ին թաթարների թիւը եղել է ոչ աւելի քան՝ 1,139,659, այսինքն՝ բոլոր մահմեդականների 52 առ հարիւր միայն, իսկ 1897-ին՝ 1,472,934 եւ կամ՝ բոլոր մահմեդականների մօտ 58 առ հարիւր:

Այս մէկն էլ ասենք ու անցնինք, որ դեռ եւս 1828-ից՝ ռուսական տիրապետութեան հէնց սկզբից է ծագում հողային այն անարդարութիւնը, որ եւ ժառանգութիւն մնաց յետնորդ սերունդներին: Մինչ՝ 1838-ին հայերը Անդրկովկասի ողջ բնակչութեան մէջ 300,000 հոգի էին, վրացիները՝ 400,000, իսկ թաթարները (ընդունելով որ Հաքստհաուզէնի առաջ բերած 709,000 թիւը անսխալօրէն բոլոր մահմեդականներին է վերաբերում, որով եւ նրանց առ առաւելն 52-60 տոկոսը կարող են թաթար եղած լինել), դարձեալ մօտաւորապէս 400,000, այսինքն՝ 3:4:4, նրանց ազգային երկրամասերը (տերրիտորիաները) ներկայացնում էին մի այսպիսի պատկեր. Ռուսական Հայաստան՝ 18,620 քառ. վերստ տարածութիւն, Վրաստան՝ 79,000 քառ. վերստ, թաթարների երկրամաս (այժմեան անունով՝ Ատրբէջան) 73,500 քառ. վերստ:

Այս նշանակում է ուրեմն, որ 1838-ին Անդրկովկասում վրացիների եւ թաթարների թըուական մեծութեան ոչ պակաս քան ¾-ը կազմող հայութեանը, որպէս նրա տերրիտորիա, յատկացուում էր մի հոզամաս միայն, որ 4-4½ անգամ աւելի փոքր էր, քան իր հարեւաններինը: Այդ արատն եւս առաջ էր գալիս նըրանից, ինչ որ անդրկովկասեան ժողովուրդների հողային ներկայ յարաբերութիւնների հիւանդոտ երեւոյթի հիմնապատճառն է: Այն որ հայկական փոքր Կովկասը, ուր այն ժամանակ էլ նստած էր առողջ հայութիւն — Գուգարք եւ Արցախ — չէր համարուում հայ աշխարհի մաս, այլ՝ վրացական եւ թաթարական:

Մեզ մասնաւորապէս հետաքրքրում է այն հարցը, թէ ռուսական տիրապետութեան ընկղմին Անդրկովկասի սահմաններում ապրող հայ տարրը ի՛նչ քանակական ոյժ էր ներկայացնում:

Տեսանք արդէն, որ նրա թիւը 1838-ին 294,606 էր եւ կամ, կլոր թուով, 300,000: Եւ այդ թիւը համապատասխանում է իրականութեան, ի հարկէ մօտաւորապէս:

Իր աշխատութեան մէջ մի ուրիշ տեղ էլ (Ա. 220) խօսելով յատկապէս հայերի թուի մասին, Հաքստհաուզէն ասում է.

«Հայ ազգաբնակութեան այժմեան թիւը Անդրկովկասի երկրամասերում հաշուում են 274,000»:

Այս թիւը, տեսնում ենք, վերոյիշեալից շատ էլ հեռու չէ:

Մի մանրամասնութիւն եւս անհրաժեշտ է այստեղ վեր հանել: Այն, որ պարսկական տիրապետութեան վերջը եւ ռուսական տիրապետութեան սկիզբը Այրարատեան Դաշտը իր շրջաններով — հայ քաղաքակրթութեան սիրտը կազմող մեր այդ բնաշխարհը — ¼ միլիոնի հասնող բնակչութիւն անգամ չունէր, ուրիշ խօսքով՝ զգալապէս թափուր էր դարձած իր բնիկ, հնումը խիտ եղած տարրից: Դեռ վերոյիշեալ քանակի մի մասն էր միայն տեղացի, Այրարատեան Հայաստանի բնիկ տարր, իսկ միւս մասը նոր էր եկել, գաղթել Պարսկաստանից ու Տաճկաստանից: